կօրէացիներից երրորդ դարում այն արշաւանքի ժամանակ, որ նրանք կատարել են իրանց աշխարհակալ Ջինգօ-Կօու թագուհու առաջնորդութեամբ:

Մեծ Բուդդհան, Դայ-Բուտսու, գտնւում է տաճարից ոչ հեռու: Առաջ նրա վրա էլ մի տաճար կար կառուցած. բայց երկրաշարժի ժամանակ ծովի մի լեռնադէզ ալիք սրբել է տաճարն ամբողջովին գետնի երեսից առանց Բուդդհայի խորին մտածմունքը խանգարել յանդգնելու, եւ այդ օրւանից Բուդդհան բազմած է բաց երկնքի տակ ընութեան ծոցում:



ԴԱՅ-ԲՈՒՏՍՈՒ